«ԲՈՒԺԻՉ» ՈՒԼՈՒՆՔ-ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ

ԱՍՏՂԻԿ ԽՍՐԱՅԵԼՅԱՆ

Հայաստանի պատմության պետական թանգարանի № 1 զետեղարանում պահպանվում են մի խումբ ուլունքներ, որոնց XIX դ. և XX դ. սկզբին վերագրվել է հիվանդություններից պաշտպանելու և բուժելու հատկություն։ Այս ուլունքները կոչվում են «ուլունք-պահպանակներ», որովհետև արտաքին ձևով նման են ուլունքի և մեծ մասն անցք ունի։ Բացառություն են կազմում հինգը, որոնցից մեկը ոսկրից է, առանց անցքի (№ 4805)[1], մյուսը՝ արծաթյա շրջանակով խեցի է (№ 4788), երրորդը նախկինում օգտագործվել է որպես մատանու ակ (№ 3650) և այլն։

Թանգարանում պահվող ուլունքները 29 հատ են. դրանց ծագման ժամանակաշրջանի մասին մեզ որևէ տեղեկություն չի հասել, պատրաստված են 12 նյութից՝ սաթ, ագաթ, սարդիոն, քաղկեդոն, ծիածանաքար, օնիքս, գիշեր, գլաքար, ոսկր, փայտ, ապակի, հախճապակի։ Տարբեր վայրերի հնագիտական պեղումներից գտնվել են բազմաթիվ նմանօրինակ ուլունքներ՝ պատրաստված հիմնականում տեղական նյութերից[2]։ Խոր անցյալում ևս ուլունքներին մոգական նշանակություն է վերագրվել, և մարդիկ կրել են դրանք իրենց վրա[3]։ Ազգագրական հետազոտությունները ցույց են տալիս, որ այդպիսի ուլունքներ օգտագործվել են պատմական Հայաստանի բոլոր շրջաններում։

Ուլունք-պահպանակները թանգարանը ձեռք է բերել 1929—1937 թթ. գիտարշավների և Երևանում կատարված գնումների միջոցով։ Դրանց անունները գրի են առնվել այնպես, ինչպես որ օգտագործվել են տվյալ վայրում՝ բարբառային ձևով, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն (երբեմն աղավաղված)։ Միևնույն նյութից պատրաստված զանազան ուլունքներ հաճախ տարբեր նշանակություն են ունեցել և տարբեր նյութերից պատրաստվածները՝ օգտագործվել միևնույն ձևով կամ նպատակով։ Մենք դրանք խմբավորում ենք ըստ իրենց կատարած դերի։ Այսպիսով, «ուլունք-պահպանակները» բաժանվում են 12 խմբի՝ դեղնախտ, հազ, ուռած գեղձեր, ծմրուկ, վերքեր, օձի խայթածը, թունավորում «բուժող», քթի արյունահոսությունը դադարեցնող, թպղի, աչքի հիվանդություն, ծաղիկ «բուժող» և հիվանդություններից «պաշտպանող» ուլունքներ։

Առաջին խումբը բաղկացած է դեղնախտ «բուժող» երեք ուլունքից, որոնցից մեկն ագաթից է, երկուսը՝ սաթից։ Ագաթե ուլունքը (№ 3650), որ կոչ-

---

[1] Նկարագրվող բոլոր ուլունքների մասին տեղեկությունները վերցված են Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնի մատյաններից։ Տեքստում փակագծերի մեջ նշվում են դրանց համարները։

[2] А. А. Мартиросян, Раскопки в Головино, Ереван, 1954, էջ 84—87։

[3] Ж. Д. Хачатрян, Гарни, 5, Ереван, 1976, էջ 107—108։

վում է «փանձահար», բերված է Սասունի Հազո քաղաքից։ Սա մոխրագույն է, բնական գծերով լայն քարի երկու կողմերը կոր, ներքևի ու վերևի մասերը՝ ուղիղ կտրվածքով (լայն.՝ 4 սմ., երկ.՝ 3 սմ., հաստ.՝ 0,5 սմ.)։ Կենտրոնում ունի կախելու համար անցքով ելուստ։ Ուլունքը կախում էին վզից՝ մարմնի վրա։ Բացի այդ, քարը գցում էին ջրի մեջ, դնում լուսնի դեմ (ամսի 14—18-ին) և երեք օր հաջորդաբար, առավոտյան լույսը չբացված, ջուրը խմեցնում հիվանդին։ Հավանաբար, այս ուլունքը նախկինում այլ նշանակություն է ունեցել, որովհետև, ըստ միջնադարյան աղբյուրների, ագաթը օգտագործվում էր թունավորման դեմ[4]։

Սաթե ուլունքներից մեկը (№ 4779) կոչվում է «քյարհամա», որը, մեր կարծիքով, պարսկերեն «քահրուբա»՝ սաթ բառի[5] աղավաղված ձևն է։ Սա մուգ դեղին, կիսաթափանցիկ, շրջանաձև, մի երեսը թեթև կորությամբ, մյուսը՝ թեք կտրվածքով, կլոր անցքով ուլունք է (տրամ.՝ 2 սմ, բարձր.՝ 0,6—1 սմ), օգտագործվել է XX դ. սկզբին, Երևանում։ Այն կախում էին հիվանդի կրծքին կամ գցում էին ջրի մեջ ու ջուրը խմեցնում։

Սաթե երկրորդ ուլունքը կոչվում է «դեղին քար» (№ 4781)։ Սա երկարավուն է, մուգ կարմրաշագանակագույն, դեղնավուն փայլուն գծերով (երկ.՝ 1,7 սմ, շրջ.՝ 4 սմ), օգտագործվել է Երևանում։ Բորշալուի գավառում դեղնախտը բուժելու համար սաթը ծեծում էին, շորով մաղում ու մի թեյի գդալի չափ ջրի մեջ լուծելով, նախքան ուտելը, հիվանդին խմեցնում[6]։ Նոր Բայազետում դեղնախտը դեղին գույնի ուլունքով բուժելու պատճառներից մեկն այն էր, որ կարծում էին, թե հիվանդությունն առաջանում է դրսից տուն եկողներից որևէ մեկի՝ հետը դեղին ուլունք բերելու հետևանքով. ուստի, պետք էր «հակազդել» նույն միջոցով[7]։ Որոշակի նշանակություն էր տրվում դեղին գույնին, և դեղնախտով հիվանդի վզից ոսկի էին կախում, որ նա ապաքինվեր[8]։

Սաթի օգտագործումը որպես «բուժման», և, առհասարակ, հմայության միջոց, գալիս է դարերի խորքից։ Դեռևս 5—6 հազար տարի առաջ են պատրաստվել այն սաթե հմայական պահպանակները, կոճակները, որոնք գտնվել են քարեդարյան թաղումներից[9]։

Հայաստանում սաթե ուլունքներ են հայտնաբերվել մ. թ. ա. XIV—XIII դդ.՝ Գեղարոտի թաղումներից[10], Մեծամորից[11], Կարմիր բլուրից[12] և այլն։

---

4 Կ. Պ. Պատկանով, Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII в., СПб., 1873, էջ XXXI։

5 Բ. Վ. Միллер, Персидско-русский словарь, М., 1953, էջ 414։

6 «Ազգագրական հանդես», X, 1903, էջ 160։

7 Նույն տեղում, XVI, 1907, էջ 46։

8 Պատմության թանգարանի ազգագրության բաժնի արխիվ (այսուհետև՝ ՊԹԱԲԱ), Ա. Իսրայելյանի նյութերը, Թալինի շրջան, 1977, տետր № 1, էջ 10։

9 Ա. Ե. Ферсман, Очерки по истории камня, т. I, М., 1954, էջ 295։

10 Ա. Ա. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 90—91։

11 Է. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973, էջ 179։

12 Բ. Բ. Пиотровский, Кармир-блур, III, Ереван, 1955, էջ 51։

Միջին Ասիայում ևս, մինչև վերջերս, սաթե ուլունքներին վերագրվում էր դեղնախտ «բուժող» և նրանից պաշտպանող նշանակություն[13]։

Քննվող ուլունքներից հաջորդը երեխաների հազն էր «բուժում» (№ 4783)։ Այն օգտագործում էին Երևանում։ Սա գնդաձև, սպիտակ հախճապակուց է, վրան կապույտ, վարդագույն, դեղին ծաղիկներով, ոսկեգույն ալիքաձև գծերով (շրջ.՝ 3,5 սմ)։ Ուլունքը գցում էին ջրի մեջ և ջուրը խմեցնում։

Գրեթե բոլոր ուլունքները գցում էին ջրի մեջ ու ջուրը խմեցնում հիվանդին, որովհետև ջուրը ևս համարվում էր բուժող միջոց։ Նրան մոգական ուժ ու զորություն վերագրելը կապված էր ջրի պաշտամունքի հետ։ Բանահյուսության մեջ հաճախ հանդիպում է «անմահական ջրի» գաղափարը, որն ըստ ժողովրդական պատկերացման և՛ հիվանդություն էր «բուժում», և՛ արգասավոր ներգործություն ունենում[14]։

Ուռած գեղձեր «բուժող» ուլունքը (№ 4778) երկարավուն է և կոչվում է «խիար»։ Օգտագործվել է Երևանում, XIX դ.։ Սա դեղին գույնի տարբեր երանգներով, մի կողմը մինչև կեսը հարթ հատած, օնիքսե ուլունք է (երկ.՝ 2,8 սմ, շրջ.՝ 4,6 սմ), որը դնում էին գեղձի վրա ու կապում։

Ստեփանավանի Շահնազար գյուղում օգտագործվող «ծմրուկի քար» կոչվող գլաքարե ուլունքը (երկ.՝ 4,2 սմ, շրջ.՝ 7 սմ) «բուժում» էր «ծմրուկ»[15] հիվանդությունը։ Սա ևս (№ 4931) կանաչ ու մոխրագույն երանգներով երկարավուն քար է, որը կախում էին օրորոցից՝ մանկան կրծքի մոտ, կամ գցում էին ջրի մեջ և ջուրը խմեցնում երեխային։ Ծմրահլունը նաև կախում էին երեխայի վզից կամ կապում բազկին, կարծելով, թե ծմրուկները կչորանան[16]։ Այս հիվանդությունը «բուժում» էին նաև «ծմրուկ» կոչվող սադափե խեցիով, որը մեծ մասամբ կարում էին հիվանդ երեխայի անկողնուն[17]։

Հաջորդ խմբին պատկանող ուլունքները կոչվում են «իլանջղ» կամ «իլանջուզ»[18]։ Սրանցից երկուսը «իլանջղ» կամ «իլահջաղ», վերքերը «բուժելու» համար էին։ Հայաստանի զանազան շրջաններում այս հիվանդությունը տարբեր ձևերով են պատկերացրել։ Հարքում, օրինակ, կարծում էին, թե վերքի մեջ օձանման թելիկներ կան և մի շարք ժողովրդական դեղամիջոցների հետ մեկտեղ «իլանջուղի ուլունք» էին դնում վերքի մեջ[19]։ Ախալքալաքում իլանջուղը համարվում էր մսի և կաշվի արանքում պտտվող քամի և ուլունքը շփում էին մարմնին. որտեղ որ կպչում էր, իբր, այնտեղ էր հիվանդությունը, և քարը դնում էին այդ մասի վրա[20]։ Իլանջուղը համարվում էր նաև թարա-

---

13 «Домусульманские верования и обряды в Средней Азии», М., 1975, էջ 293։

14 «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. 3, Երևան, 1962, էջ 284, 290։

15 Մանր փշանման պզուկներ, որ դուրս են գալիս երեխայի վրա, հատկապես թիկունքին (Վ. Առաքելյան, ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1972, էջ 686)։

16 Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1944, էջ 345։

17 Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 686։

18 «Իլանջուղ», կամ «օձացավ» կոչվող հիվանդությունը «կարմիր քամին» է՝ Erysipelas («Ազգագրական հանդես», Ե, 1899, էջ 167), Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 4, էջ 606։

19 «Ազգագրական հանդես», Ե, էջ 167։

20 Վ. Բդոյան, Ախալքալաքի ժողովրդական բժշկության ձևերը, անձնական արխիվ, դաշտային տետր № 118, էջ 9։

խոտ վերք առաջացնող որդ, և եթե այն «էգ» էր, մարդը մահանում էր, եթե «որձ»՝ «բուժվում» էր 30—40 տարում։ «Բուժվելու» համար հատուկ ուլունք էին դնում վերքի մեջ, որպեսզի որդը մտներ նրա մեջ և ուլունքի հետ միասին դուրս գար[21]։

Համշենահայերի մոտ տարածված էր այն կարծիքը, թե «իլոնջուղ» էր առաջանում, երբ մարդը պատահաբար ոտը դնում էր սատկած օձի կամ նրա կմախքի վրա։ Դա կոկորդի և ականջի ցավ էր «առաջացնում», որը «բուժում» էին «իլոնջուղի քար» դնելով ցավող մասի վրա։ Այն, իբր, ինքն իրեն կպչում ու բուժում էր։ Երբեմն էլ քարը կապում էին կոկորդին[22]։ Սասունցիներն այս հիվանդությունը «խլուրդ» էին անվանում. երբ վերքը «էգ» էր, հիվանդին էգ խլուրդ էին ուտեցնում, իսկ երբ «որձ»՝ որձ խլուրդ[23]։

Թանգարանում պահվող «իլանջուղի» մի ուլունքը (№ 4812) սաթից է, երկարավուն, մի մասը կիսաթափանցիկ, անցքի մոտ ճնշրով (երկ.՝ 2,3 սմ, շրջ.՝ 5,5 սմ)։ Այն օգտագործում էին Ստեփանավանի Շահնազար գյուղը գաղթած ալաշկերտցիները՝ «էգ» վերքը «բուժելու» համար։ Երկրորդ ուլունքը (№ 4805) ոսկրից է՝ գնդաձև, մի ծայրը սուր, վերևում ու ներքևում մեկական, մեջտեղը՝ զույգ փոքրագիր շրջանագծերով, սուր ծայրին և նրա հակառակ՝ կլոր մասի մեջտեղում փոքր փոսիկներով (շրջ.՝ 6,5 սմ, երկ.՝ 1,8 սմ)։ Երևանում սա դնում էին վերքի մեջ, իբր, այնտեղ գտնվող որդերը դուրս հանելու համար։ Շահնազար գյուղից բերված մեկ այլ ուլունք (№ 4815) և՛ իլանջուղ էր «բուժում», և՛ օձի խայթածը։ Սա երկարավուն, բաց ու մուգ շագանակագույն, սպիտակ գծերով ագաթ է (շրջ.՝ 6,1 սմ), որը դնում էին վերքի վրա։ Հաջորդ երկու «իլանջղ» կոչվող ուլունքները միայն օձի խայթոցը «բուժելու» նպատակով էին օգտագործվում։ Առաջինը ձեռք է բերվել Երևանից։ Սա արծաթյա շրջանակով սպիտակ, ձվաձև, պարուրաձև փորագրանախշով խեցի է (№ 4788), շրջանակը երիզված է ատամնավոր նախշերով։ Համանման խեցիներ օգտագործում էին նաև համշենահայերը[24]։ Երկրորդը՝ Սասունի Հազո քաղաքից է. ձվաձև, մի երեսը հարթ, սպիտակ, մյուսը՝ դեղին ու սպիտակ, ուռուցիկ մակերեսով ագաթ (№ 3659), որը դրված է եղել մատանու ակնաբնի մեջ (երկ.՝ 1,6 սմ, լայն.՝ 1,3 սմ)։ Քարը մի քանի անգամ տաքացնում էին, հիվանդի վերքը դաղում այնքան, մինչև ուռուցքն իջներ կամ գցում էին ջրի մեջ ու ջուրը խմեցնում հիվանդին։ Այս խմբի ուլունքներից երկուսը ագաթից են (№ 4815, № 3650)։ Տվյալ դեպքում ագաթի հատկությունները համընկնում են Մ. Այրիվանեցու և մասամբ՝ Ե. Կիպրացու տված տեղեկություններին։ Մ. Այրիվանեցին (XIII դ.) գրել է. որ ագաթը օձերի և կարիճների թույնի դեղ է[25], իսկ Ե. Կիպրացին[26] (IV դ.) հաղորդում է, որ այն մարդկանց փրկում է սողուններից։ Ա. Դավրիժեցու վկայությամբ օձի խայթածը բու-

---

21 ՊԹԱՐԱ, Պտղնի, 1976, տետր № 1, էջ 5։

22 ՊԹԱՐԱ, Սուխումի, 1976, տետր № 1, էջ 9, տետր № 2, էջ 15։

23 ՊԹԱՐԱ, Թալինի շրջան, 1977, տետր № 1, էջ 19։

24 ՊԹԱՐԱ, Սուխումի, 1976, տետր № 2, էջ 15։ Ա. Դավրիժեցին ևս նշում է այպիսի «օձի քար», որը 8 օր պահում էին վերքի վրա, մինչև առողջացնելը («Պատմութիւն Ա ռ ա ք ե լ վ ա ր դ ա պ ե տ ի Դ ա ւ ր ի ժ ե ց ւ ո յ», Վաղարշապատ, 1884. էջ 457)։

25 К. П. Патканов, նշվ. աշխ., էջ XXXI։

26 «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», Тифлис, вып XXIV, 1898, էջ 10։

ժում էին նաև «օձաքարով»։ Այն քսում էին փորձաքարին, փոշուց մի քիչ խմեցնում խայթվածին, մնացածը դնում էին վերքի վրա, և վտանգը նույն օրն անցնում էր[27]։ Ա. Դավրիժեցու նկարագրած «օձաքարը» բնական էր, և իր պարունակած բաղադրանյութերի պատճառով զանազան գույներ էր ունենում։ Իսկ թանգարանում պահպանվող «օձաքարը» (№ 4795) արհեստական է՝ պատրաստված հախճապակուց, օգտագործվել է Երևանում։ Այն գնդաձև է, սպիտակ, պարուրաձև գծերով (շրջ՝ 3,9 սմ)։ Այս ուլունքը կարում էին հագուստին, որպեսզի այն կրողը օձի խայթոցից «պաշտպանվեր» (հատկապես նրանք, ովքեր գնում էին Երուսաղեմ՝ հաջի դառնալու)։

Ավանդության համաձայն, Վասպուրականում օձի թույնը ոչնչացվում էր «օձաուլնիկով», որն օձերի թագավորի գլխին էր լինում, մթության մեջ լույս էր սփռում շուրջը և բուժում էր բոլոր տեսակի հիվանդությունները[28]։ Նույնանման կարծիք կար համշենահայերի մոտ, միայն այն տարբերությամբ, որ դա ոչ թե «օձաուլնիկ» էր, այլ օձերի թագավորի գլխի եղջյուրը և բացի հիվանդություններ բուժելուց, օգտագործվում էր նաև գուշակության համար[29] և կոչվում է «պանզեհիր», նաև՝ «օցու կոտեշ» կամ «օցոն կոտեշ» («օձի եղջյուր»)։ Որպեսզի համոզվեն, որ պանզեհիրը թունավոր չէ, այն քերում, լցնում են մածնի մեջ և տալիս կատվին։ Եթե կատուն չսատկեց, պանզեհիրի փոշին խառնում են ջրի մեջ և խմեցնում թունավորվածին։

Իրականում, պանզեհիրը շնաձկան ատամ է, որը կարելի է գտնել արտերում, անգամ կրաքարի մեջ։

Հայաստանի տարբեր շրջաններում օձի խայթածը բուժելու համար տարածված էր «փազահրի» կոչվող ուլունքը։ «Փազահրին», «փանզահր» անվան տարբերակն է և գալիս է պարսկերեն «փադզահր» կամ «փիազահր» բառից։ Սրա առաջին նշանակությունն է «հակաթույն», երկրորդը՝ քարի անունն է[30]։ Ա. Դավրիժեցին այն անվանում է «թունադեղ»[31]։

Փազահրի առանձնահատկությունն այն է, որ սա առաջանում է (բացի լեռնային ապառներից) որոշ կենդանիների՝ հատկապես վայրի այծերի օրգանիզմում և հանդես է գալիս տարբեր բաղադրություններով։ «Փազահր» է կոչվում նաև էշի, ձիու և այլ կենդանիների ծնոտի տակ առաջացող ուռուցքը։ Կենդանու սատկելուց հետո այդ ուռուցքը հանում էին, լվանում և չորացնում։ Հարք գավառում, երբ մարդ կամ որևէ կենդանի բույսից թունավորվում էր, փազահրը ջրի մեջ տրորելով խմեցնում էին իբրև դեղ։ Որոշ շրջաններում ամենալավ փազահրը համարվում էր էշի ծնոտից հանվածը[32]։

Ա. Դավրիժեցին փազահրի մասին գրում է. «Թե զինքն ըռաղիանի ջրով տրորեն և օծեն օձահարի օգտէ, և յայն պահն զցաւն խաղաղացնէ, և օգտէ ամենայն գազանահարի և զչարութիւնն խափանէ, և թե ժբ դարէ քաշ տան. օգտէ սրտին, վատուժութեան և անձինն ուժ տայ լաւ... ով ամեն օր ասկից կես

27 Առաքել Դավրիժեցի, էջ 457։

28 «Ազգագրական հանդես», XXV, 1914, էջ 60։

29 ՊԹԱԲԱ, Սուխումի, 1976, տետր № 2, էջ 15։

30 «Персидско-русский словарь», т. I, М., 1970, էջ 259։ Համշենցիների «պանզեհիրի» («օցու կոտեշ», «օցոն կոտեշ») և նրա օգտագործման մասին տեղեկություններ մեզ հաղորդել է Հ. Կարագյոզյանը։

31 Առաքել Դավրիժեցի, էջ 602—603։

32 «Ազգագրական հանդես», Ե, 1899, էջ 169։


1
2
3
4
5

դանկ ուտէ, խլսի յամենայն չար վտանգէ՝ և յամենայն մահացու դեղուց և տաք բնութեան էլ օգտէ...»[33]։

Հայաստանի պատմության պետական թանգարանի ժողովածուի փազահրը նեֆրիտից է[34], ձվաձև, փոքր բարձրությամբ, մուգ կանաչ, մի երեսին շրջանագծի և ալիքաձև գծերի հետքերով (№ 4787)։ Երկու կողմից ուղիղ հատված քարի մեջ բնական, մուգ խալեր կան, անցքը լայնակի է (երկ.՝ 2,1 սմ, բարձր.՝ 0,5 սմ, լայն.՝ 1,9 սմ)։ Երևանում սա քսում էին քարին և փոշին խմեցնում օձից խայթված մարդուն։

Թունավորման դեմ օգտագործված ուլունքները երեքն են։ Առաջինը ագաթե կլոր, մոխրագույն, կանաչավուն ու դեղնավուն գծերով, անցքով քար է (№ 4782, շրջ.՝ 5 սմ), որը Երևանում մանրացնում ու խմեցնում էին թունավորվածին։ Երկրորդը կոչվում է «դեղթափ» (№ 4811)։ Սա սպիտակ-մոխրագույն ֆոնի վրա կանաչադեղնավուն բնական նախշերով, երկար, մի կողմն ուղիղ հատված, մյուսը՝ կոր, երկայնակի անցքով օնիքսե ուլունք է, որը Նահնազար գյուղի բնակիչները (նախկին ալաշկերտցիներ) գցում էին ջրի մեջ և խմեցնում հիվանդին (երկ.՝ 2,7 սմ, շրջ.՝ 3,8 սմ)։ Երրորդը նույնպես կոչվում է «դեղթափ» (№ 4776)։ Սա կլոր, բաց մանուշակագույն, մոխրագույն, դեղնավուն գծերով, անցքով ուլունք է, որը նույնպես ջրի մեջ գցելով ջուրը տալիս էին մարդկանց, իսկ ավելի հաճախ՝ կենդանիներին (նկ. 1)։

«Դեղթափ» էր կոչվում այն գնդաձև, գունավոր, փայլուն քարը, որն «ընկնում էր երկնքից» անձրևի ու կարկուտի հետ։ Բայց նրա «բուժիչ» հատկություններն ստուգելու նպատակով այն գցում էին կաթի մեջ, և եթե կաթը դրանից մակարդվում էր, նոր միայն համարվում էր դեղթափ[35]։ Երկնքից ընկնող քարի գաղափարը կապված էր քարի երկնային ծագում ունենալու ժողովրդական պատկերացման հետ[36]։ «Դեղթափի» ուլունքով «բուժում» էին նաև աչքի հիվանդությունները[37]։

Հաղթ քաղաքից բերված՝ քթի արյունահոսությունը «դադարեցնող» քարը (№ 3650) կոչվում էր «արյան քար» (նկ. 2), որը ձվաձև, տափակ, սև գիշերաքար է։ Սրա դրսի երեսին Ղուրանից մի հատված է փորագրված[38]։ Քարը տաքացնում էին, հոսող արյան կաթիլը վրան կաթեցնում և կպցնում մարդկանց երկու հոնքերի արանքում։

«Թպզի» կոչվող ուլունքները երեքն են, որ օգտագործվել են Ախալքալաքում՝ բոլորը մի թելի վրա անցկացված (թեև այժմ առանձին համարներով են պահվում)։ Մեկն օնիքսից է (№ 4773), սպիտակ և դեղին երանգներով, երկարավուն, մի կողմն ուղիղ հատած՝ վրան հազիվ նշմարվող զիգզագ գծերով ու կետիկներով (երկ.՝ 4 սմ)։ Հաջորդը ևս օնիքսից է (№ 4774),

---

33 Առաքել Դավրիժեցի, էջ 602—603։

34 Նեֆրիտը դեռ շատ վաղուց համարվել է դեղամիջոց և դրանով բուժել են հատկապես երիկամները։ Այստեղից է դալիս հունարեն անվանումը՝ νεφρος—երիկամ (БСЭ, հ. 29, էջ 505)

35 Թալինցիների համոզմամբ և՛ դեղթափը, և՛ ծաղկի քարը, և՛ թպզի ուլունքը երկնքից էին ընկնում (ՊԹԱԲԱ, Թալին, տետր № 1, էջ 21, 17)։

36 «Академия наук СССР, 45, Академику Марру», М. —Л., 1935. էջ 574։

37 ՊԹԱԲԱ, նույն տեղում։

38 Ղուրան, թարգմ. արաբերենից Աբր. Ամիրխանյանց, Վառնա, 1909, 112 սուրե Ալ-ըիլաս (էջ 602)։

կանաչ, դեղին, սպիտակ բնական նախշերով. երկարավուն (երկ.՝ 4 սմ): Երրորդը փայտից է (№ 4806), գնդաձև, անցքով (շրջ.՝ 7 սմ): Հղի կանայք ինն ամիս այս ուլունքները կրում էին իրենց վզին, իսկ ծննդաբերելուց հետո՝ դնում երեխայի բարձի տակ, որպեսզի նա «չթպղոտեր»։ «Թպղ»[39] կոչվող հիվանդության մասին պատկերացումը մեկ անգամ ևս հաստատում է, որ ժողովուրդը նախկինում հիվանդությունը ընկալել է որպես չար ոգու անձնավորում։ Թպղը տարբեր ձևերով են պատկերացրել. մի դեպքում այն գորտի տեսքով չար ոգի էր, որը մտնելով հղի կանանց արգանդը, թունավորում էր սաղմը, և նորածինը կամ մեռած էր ծնվում, կամ չափազանց սակավակյաց էր լինում։ Այս «չար ոգու» ազդեցությանը «ենթարկված» կինը «թպղոտ» էր կոչվում։ Վասպուրականում հաճախ ճահիճներից գորտեր էին բռնում, թալիսմաններ պատրաստում, որոնք հղի կանանց «պաշտպանում էին» թպղիներից[40]։ Այդ նույն նպատակով գորտանման զանազան զարդեր էին պատրաստում։ Եղեգնաձորի Շատին գյուղի ընտանիքներից մեկում մինչև վերջերս էլ երեխայի օրորոցից կախում էին XIX դ. պատրաստված, 16 սանտիմետրանոց, ամբողջ մակերեսը մանր ուլունքներով զարդարված, մեջքին շեղանկյուն նախշերով գորտ (նկ. 3)։

Վ. Բդոյանը նշում է, որ գորտը նախապես պաշտվել է իբրև տոտեմ, իսկ տոտեմիզմի անկումից հետո՝ նոր ֆունկցիաներ է ստացել, որոնցից են մայրության և մանկության պաշտպանությունը։ Սա արտահայտվում է հետևյալ սովորությամբ. Արագածի հարավային ստորոտում մեծ, գորտանման բնական քար կա։ Այդտեղ էին գալիս չբեր կանայք՝ որդի ունենալու նպատակով և թպղի հիվանդություն ունեցողները՝ երեխայի մահը կանխելու ակնկալությամբ[41]։

Թպղը պատկերացվում էր նաև որդի տեսքով, որը ճանկեր ուներ և բռնում էր երեխայի, նրա հոր կամ մոր լյարդը։ Նրանից ազատվելու համար նորածին երեխայի մարմնին, շուրթերին ու ականջներին մեղր էին քսում և երեք-չորս օր կուրծք չէին տալիս։ Քաղցից նեղվելով, իբր, թպղը դուրս էր դալիս, որպեսզի մեղրն ուտեր։ Այդ ժամանակ նրան բռնում էին և երեխային փրկում[42]։ Այնուհետև, թպղը դնում էին տուփի մեջ և պահում։ Երբ ուրիշ կանայք պատրաստվում էին երեխա ունենալ, թպղը տրորում էին, լցնում ջրի մեջ և խմեցնում նրանց։ Թպղից ազատվելու համար նաև գիր էին անել տալիս[43] «կախարդներին» և երբ սրա ազդեցությամբ կինը սկսում էր որձկալ, աշխատում էին նրա բերանը կրակի վրա պահել, որպեսզի երևակայական որդն ընկներ նրա մեջ ու այրվեր։

---

39 Թպղա կամ թպղ—1. նորածիններին խեղդող երևակայական մի էակ. 2. մանուկների մի տեսակ մահացու հիվանդություն, որ և «թպղի», սրանից էլ թպղոտ՝ «թպղի հիվանդությամբ բռնված» (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1926, էջ 1330)։

40 «Ազգագրական հանդես», XXV, 1914, էջ 59։

41 «Աշխատություններ Հայաստանի պետական թանգարանի», հ. 3, Երևան, 1950, էջ 7, 9։

42 Սրա զուգահեռ երևույթը կարելի է դիտել աֆրիկյան որոշ ցեղերի մոտ, երբ չար ոգուն կերակուր էին դոհաբերում, որպեսզի նա դուրս գար և ուտեր (Дж. Фрезер, Золотая ветвь, М., 1931, էջ 260—261)։

43 Թպղը հիշատակվում է գրավոր թալիսմաններում (А. А. Одабашян, Народные верования армян, по материалам рукописных талисманов XIV—XIX вв. («Кавказский этнографический сборник». 6. М., 1976, էջ 117)։

Հարքում գոյություն ուներ նաև այն համոզմունքը, որ թպղոտություն է առաջանում այն ժամանակ, երբ որևէ մեկը, դիտմամբ, թպղի ուլունքը հղի կնոջ վրա պահած, ձեռքի մեջ սեղմում էր[44]։ Հետևաբար, թպղը «բուժելու» համար թպղի ուլունք էր անհրաժեշտ լինում։ Հավատում էին, թե կինը կարող է թպղոտել նաև այն դեպքում, երբ մի ուրիշ՝ 40 օրը չլրացած երեխայի մայրիր երեխայի շորերն էր բերում կամ ուղղակի դալիս էր նրա մոտ[45]։

Աչքի հիվանդություն «բուժող» քարը (№ 3650) կոչվում է «շահագի քար»։ Ագաթեկ, գնդաձև (շրջ.՝ 5,5 սմ) այս ուլունքն այնպես էին կախում գլխարկից, որ աչքին մոտ լիներ։ Ուլունքը բերվել է Հազո քաղաքից։ Ի դեպ, Թալինի շրջանում բնակվող սասունցիների վկայությամբ աչքի հիվանդությունը «բուժում» էին նաև կարմիր, գնդաձև ուլունքով, որը կրում էին աչքերի մոտ[46]։ Ինչպես հաղորդում է Ա. Դավրիժեցին, աչքի հիվանդություն բուժող քար էր համարվում նաև «գիշերը»[47]։

Թանգարանում պահպանվող ուլունքներից երկուսը՝ «կախարդական քարը» (№ 4809) Մեզրու շրջանի Լիճք գյուղից, և «բուժիչ» քարը (№ 4775, օգտագործման վայրն անհայտ է) որոշակիորեն հայտնի չէ, թե որ հիվանդության դեպքում են օգտագործվել։ Առաջինը ագաթից է (շրջ.՝ 6,7 սմ), երկրորդը՝ քաղկեդոնից (երկ.՝ 4 սմ, շրջ.՝ 7,7 սմ)։ Երկուսն էլ գցում էին ջրի մեջ ու ջուրը խմեցնում հիվանդին։

Քննվող հաջորդ ուլունքը (№ 4780) օգտագործվում էր Երևանում և հիվանդություններից ու պատահարներից «պաշտպանելու» նշանակություն ուներ։ Այն ապակուց է, երկարավուն, սպիտակ շրջանակների մեջ կանաչ ու կարմիր պուտերով (երկ.՝ 1,2 սմ, շրջ.՝ 4,2 սմ), կոչվում է «աչիչ ուլնիկ», նման է Թանգարանի որոշ «աչքի ուլունքներին», բայց չար աչքի դեմ չի օգտագործվել։

Սև, պրիզմայաձև, բոլոր ութ անկյունները հատած գիշերաքարի ուլունքը (№ 4803, երկ.՝ 2 սմ, լայն.՝ 1,5 սմ) Մոկսում կապում էին հիվանդ ոչխարի վզից կամ ջրի մեջ էին գցում և ջուրը խմեցնում (հիվանդության անունը նշված չէ)։

Հաջորդ ուլունքներից յոթը «բուժել» են ծաղիկ հիվանդությունը։ Սրանցից վեցը ոչխարների համար էին, մեկը՝ (№ 4928) նշված չէ՝ մարդո՞ւ համար էր, թե՞ ոչխարի (նկ. 4)։ Վերջինս գնդաձև է, պատրաստված սև ապակուց, որի վրա դեղին վանդակներում կարմիր ու սպիտակ պուտեր կան (շրջ.՝ 2,7 սմ)։ Օգտագործման վայրը հայտնի չէ։ Ոչխարի «ծաղկի ուլունքներից» երկուսը կոչվում են «ծաղկի հան»։ Առաջինը (№ 4814) գնդաձև է, բաց դեղնամորուգույն։ Պատրաստված է քաղկեդոնից (շրջ.՝ 5,2 սմ)։ Երկրորդը (№ 4813) ծիածանաքարից է, գնդաձև, կարմրավուն, մի մասը սպիտակ (շրջ.՝ 5,7 սմ, նկ. 5)։ Երկուսն էլ ձեռք են բերվել Շահնազար գյուղից (նախկին ալաշկերտցիներից)։ Դրանք գցում էին ջրի մեջ, այդ ջրով լվանում կենդանու աչքերը, ապա ջուրը խմեցնում նրան[48]։ Երրորդ ուլունքը (№ 4804) սար-

---

44 «Ազգագրական հանդես», Ե, էջ 121—122։

45 ՊԹԱԲԱ, Թալին, տեսր № 1, էջ 23։

46 ՊԹԱԲԱ, նույն տեղում, էջ 15։

47 Առաքել Դավրիժեցի, էջ 594։

48 Մուշի Էրիշտեր գյուղի նախկին բնակիչներից ոմանք վկայում են, որ Սասնա մոտ մի

դրոնից է, երկարավուն, կաթիլանման. վերևի մասն ուղիղ հատած (երկ.՝ 3 սմ. լայն.՝ 1,5 սմ—0,8 սմ): Մոկսում այն կախում էին կենդանու վզից կամ ցուրն էին խմեցնում, Զորրորդ (№ 4932) ուլունքն օգտագործվում էր նույն վայրում և նույն ձևով։ Այն ծիածանաքարից է, ձվաձև, նարնջագույն, մի կողմը հարթ, մյուսն՝ ուռուցիկ (երկ.՝ 1,5 սմ, լայն.՝ 1 սմ): Հաջորդը (№ 3652) արհեստական քար է, գլանաձև, սև ֆոնի վրա սպիտակ, կամարաձև նախշերով, կարմիր, ուռուցիկ, կլոր կեսերով։ Ախալքալաքի շրջանի Կարծահ գյուղում այն գցում էին ջրի մեջ, ջուրը խմեցնում ոչխարին և քսում նրա աչքերին (բարձր.՝ 2 սմ, շրջ.՝ 7,5 սմ): Վեցերորդը, որ կոչվում է «ծաղկի ուլնիկ» (№ 4798), քաղկեդոնից է, կլոր, շագանակագույն, գարշնագույն և սպիտակ-կապտավուն գծերով (շրջ.՝ 5,2 սմ): Սա Գավաշում կախում էին ոչխարի վզից, կամ էլ գցում էին ջրի մեջ և ջուրը խմեցնում։ Ոչխարների ծաղիկ հրվանդության ժամանակ պտուղը չվիժելու համար, «թպղի ուլունքը» գցում էին ջրի մեջ և այն խմեցնում նրանց, իսկ որպեսզի ոչխարն ընդհանրապես ծաղիկով չհիվանդանար, «ծաղկահլուն» էին կախում գոմի պատից կամ սյունից[49]։

Տարբեր նյութերից պատրաստված ուլունքներին վերագրվող հատկությունները չէին սահմանափակվում հիվանդություններ «բուժելով» և նրանցից պաշտպանելով։ Դրանց, որպես հմայական պահպանակների, բազմաթիվ այլ նշանակություններ են տրվել, ինչպես օրինակ՝ գազաններից, կայծակից, թշնամուց պաշտպանելը, հաջողություն, երջանկություն բերելը և այլն։ Այսօր հիշյալ հավատալիքների վերապրուկներն են միայն պահպանվել, որոնց հետազոտումը պատմագիտական նշանակություն ունի։

«ЛЕЧЕБНЫЕ» БУСЫ-ОБЕРЕГИ

АСТХИК ИСРАЕЛЯН

Резюме

С древнейших времен камням придавались различные магические свойства, о чем свидетельствуют многочисленные бусы, найденные при археологических раскопках.

Коллекция бус из янтаря, агата, сердолика, халцедона. опала, оникса, гагата, гальки, кости, дерева, стекла и фаянса хранится в Государственном музее истории Армении. Они были распространены в XIX—XX вв. на территории всей Армении.

Согласно народным верованиям этого периода, бусы, изготовленные из указанных материалов, «лечили» людей и скот от разных болезней. Некоторые из них «выполняли» профилактические функции. Бусы рассматриваемой коллекции использовались для «лечения» желтухи, кашля, опухолей, ран, глазных заболеваний, оспы, отравления, змеиного укуса и при болезни «тпха».

ծայր կար, որից քար էին պոկում, աղում և աղի հետ խառնելով տալիս էին ծաղիկով հիվանդ ոչխարին։ Սա կոչվում էր «ծաղկի քար» (ՊԹԱԲԱ, Թալինի շրջան, տետր № 1, էջ 28—29)։

[49] Նույն տեղում, էջ 6, 8։